ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 72-Ա/2 30.01.2020թ

ՌՈՏԵՐԴԱՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆԻՆ «ՎԱԽԵՆԱԼՈՒ ՈՉԻՆՉ ՉԿԱ» ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԻ ՌԵԺԻՍՈՐ Ս. ԽՆԿԱՆՈՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Ռոտերդամի միջազգային կինոփառատոնին «Վախենալու ոչինչ չկա» վավերագրական ֆիլմի ռեժիսոր Ս. Խնկանոսյանի մասնակցության նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Ռոտերդամի միջազգային կինոփառատոնին «Վախենալու ոչինչ չկա» վավերագրական ֆիլմի ռեժիսոր Ս. Խնկանոսյանի մասնակցության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1056. Կինեմատոգրաֆիայի ծրագրի» «11005. Աջակցություն կինոարվեստին» միջոցառման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից (տող՝ «Միջազգային կինո-

փառատոներին, կինոշուկաներին և կինոնախագծերին մասնակցություն») հատկացնել 267.1 (երկու հարյուր վաթսունյոթ հազար մեկ հարյուր) հազար դրամ՝ հունվարի 28-ից փետրվարի 1-ը Ռոտերդամի միջազգային կինոփառատոնին «Վախենալու ոչինչ չկա» վավերագրական ֆիլմի ռեժիսոր Ս. Խնկանոսյանի կեցության ծախսերի մասնակի փոխհատուցմանը:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարին սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը հատկացնելու համար հրամանի ուժի մեջ մտնելու պահից 15-օրյա ժամկետում կնքել պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) «Փաստա-վավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ի հետ:

4. Նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետին՝

1) հսկողություն իրականացնել պայմանագրի, պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման և բովանդակային հաշվետվության ներկայացման ժամկետի կատարման նկատմամբ:

2) պայմանագրով նախատեսված բովանդակային հաշվետվությունը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում դրա վերաբերյալ եզրակացությունը տրամադրել ֆինանսաբյուջետային վարչությանը:

3) մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը ներկայացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրության նախագիծը և բովանդակային հաշվետվությունը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2020 թ_____N _____ հրամանի

ԾՐԱԳԻՐ

Ռոտերդամի միջազգային կինոփառատոնին «Վախենալու ոչինչ չկա» վավերագրական ֆիլմի ռեժիսոր Ս. Խնկանոսյանի մասնակցության

1.	Կազմակերպության անվանում՝	«Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ
2.	Կազմակերպության գտնվելու վայր՝	ք. Երևան, Գ. Չաուշի 50
3.	Ծրագրի անվանում	Ռոտերդամի միջազգային կինոփառատոնին «Վախենալու ոչինչ չկա» վավերագրական ֆիլմի ռեժիսոր Ս. Խնկանոսյանի մասնակցության ծրագիր
3.1	Բովանդակություն	Ռոտերդամի միջազգային կինոփառատոնը հանդիսանում է կինոաշխարհում ամենահեղինակավոր կինոփառատոներից մեկը: Հայ կինոռեժիսոր Սիլվա Խնկանոսյանի «Վախենալու ոչինչ չկա» վավերագրական ֆիլմը, որը համատեղ արտադրություն է Ֆրանսիայի հետ, ընդգրկվել է վերոնշյալ փառատոնի մրցութային ծրագրում և փառատոնի կազմակերպիչները հրավիրել են հեղինակին ներկայացնելու ֆիլմը, ինչպես նաև փառատոնի ողջ ընթացքում մասնակցելու՝ փառատոնի շրջանակներում իրականացվող միջոցառումներին: Փառատոնի ընթացքում նախատես-ված են հանդիպումներ ՝ լրագրողների, կինոգործիչների և հանդիսատեսի հետ:

		Ռոտերդամի կինոփառատոնին հայկական ֆիլմի մասնակցությունը կարևոր է հայկական կինոյի հանրահռչակման, միջազգային կապերի ընդլայնման և երիտասարդ ռեժիսորի մասնագիտական առաջընթացի համար:
3.2	Նպատակ	Հայկական կինոարտադրանքի միջազգայնացում, երիտասարդ ստեղծագործողի մասնագիտական աճի խթանում:
3.3	Անցկացման ժամկետ	2020 թ. հունվարի 28-ից փետրվարի 1-ը
3.4	Անցկացման վայր	Ռոտերդամ, Նիդեռլանդներ
3.5	Ակնկալվող արդյունքներ	Հայկական կինոյի հանրահռչակում, միջազգային կապերի և մասնագիտական փորձի ընդլայնում, օտարերկրյա կինոգործիչների հետ համատեղ ծրագրերի իրականացման համար՝ կապերի ամրապնդում, հայ մշակույթի միջազգայնացում:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Ռոտերդամի փառատոնի մրցութային ծրագրում ընդգրկված են 10-ից ավելի մասնակիցներ, միջազգային հանձնաժողովի 5-ից ավելի անդամ, փառատոնի հանդիսատեսի քանակը կազմում է 100000-ից ավելի: